բայի եկեղեցու արեւմտեան պատի առաջ, դրան ձախ կողմից կանգնում է մի խաչ, որի պատուանդանն է միայն մնացած արձանագրութեան հետ (պատկ. 12)։

ՈԿ (պատուանդանի հիւսիսային ճակատին)
Ես Սարգիս անպիտան քահանայ կանկ-
նեցի զսբ նշան|քս ի բարեխաւսութի
ինձ եւ ծնաւղաց իմոց եւ չնորհաղարդ |
աշակերտի իմոյ Աշոտոյ որք երկրպա-
գէք յիշեցէք աղա.(¹)

Երկու տարի յետոյ, 1213 թուին, մի խումբ աշակերտներ մի խաչարձան մատուցեն կանգնում իրենց ուսուցիչների յիշատակին պարսպից դուրս, արեւելեան կողմից, Յովհաննէս փակակալի և իւր եղբայրների յիշատակին կանգնած խաչարձանի մօտ (պատկ. 13).

Թվ ։ Ո ։ Կ ։ Բ ։ Շնորհիւն այ մեք նուաստ աշակերտք Սիթա եւ Սիմաւոնի
Սոսթանէս եւ Մաթէոս ։ եւ Գրիգորէս չի
նեցաք զսբ Կաrապետս ի վերա չիրմա
ց սոցա եւ առաջնորդք սբ ուխտիս սահ
մանեցին ։ Բ ։ ճրագալոյցն վն հոգո
ց նոցա եւ այլ ննջեցելոց որ յայոր (s!)
հանգստարանի(²)։

Տարաբաղդաբար մեզ յայտնի չեն այն ուսուցիչների անունները, որոնց երախտապարտ են զգում վերոյիշեալ աշակերտները։

Եղիային և Մխիթարին ժամանակակից էր Գէորգ կամ Գորգ հայր, որը մի արձանագրութիւն ունի բլրի եկեղեցու հիւսիսային պատին, անմիջապէս մեծ լուսամուտի տակ և որի անունը յիշուած էր նաև վերոյիշեալ աւետարանի յիշատակարանի մէջ (պատկ. 10).

Շնոr հիւն այ Գորգ հայրն եկեղս ետու
գիմ
այգին ի սբ ուխտս եւ սպասաւոrքս
ետուն ։ Ջ ։ աւր
ժամ ։ բ ։ ինձ ։ բ ։ Շողոկաթա ։ բ ։ Ստեփանոսի ։

Ժամանակակցութեան փաստ կարող է լինել այն հանգամանքը, որ նոյն գրչութեամբ և անմիջապէս Մխիթարն ևս աւելացնում է իւր արձանագրութիւնը.

(1) Համ. Ալիշան. Այր. 355։
(2) Համ. Ալիշան. Այր. 356։

Եւ ես Մխիթաr վդ եւ քոյր իմ Թամար
որ զմեր այգին տուաք
զսեւահողն եւ ժամ գրեցին ։ բ ։ ինձ
։ բ ։ Թամարին ։ բ ։ Մաթարին ։
Ա ։ իմ հաւրն եւ մաւրն ։ կատաrիչքն
աւրհնի ին ած(¹) (պատկ. 10)

Սոյն հայր Գորգի կամ «հայր Գէորգ»ի տափակ գերեզմանաքարը Ապլ Նէկեր վարդապետի հետ գտնւում է մի կոտրած խաչ-

(1) Սեբաստիայի Ս. Նշանի ձեռագիրներից N 153 ըստ Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանի, գրուած Մխիթար գրչի ձեռքով, որ ապրում էր ոչ վաղ քան ԺԲ. դարի վերջերը կամ ԺԳ.ի առաջին քառորդը, որովհետեւ, ի միջի այլոց, արտագրում է եւ Դաւիթ Քոբայրեցու «Որբանութիւն Նահապետացն» եւայլն աշխատութիւնը։ Ձեռագիրը թուական չունի, բայց ցուցակագրողի տուած տեղեկութեամբ «անցման» գրով է եւ իւր «հնագրոշմ» նկարագրով ժողովածուի հնագոյն ձեռագիրներից մէկը. այսինքն գրուած է արեւելեան բոլորգրով որ գործածական էր ԺԲ-ԺԳ. դարերում ճառընտիրների համար՝ յատկապէս, արեւելեան Հայաստանի վանքերում։

Ստացողը նոյնպէս Մխիթար էր կոչւում, էջ 500. «Ճշմարիտ Քրիստոսի բանին նորընծայ սպասաւոր վարդապետ». էջ 525. «Զընտրեալն եղբայր սրբազան զվարդապետ Մխիթար աղաչեմ ստացաւղս համանուն յիշել ի տէր, եւ խնդրել ողորմութիւն յԱստուծոյ»։

Հաւանօրէն այս ստացող Մխիթար վարդապետը նոյն է Եղիայի ժամանակակից եւ այս արձանագրութեան Մխիթար վարդապետի հետ (տե՛ս եւ պատկ. 9). որովհետեւ ձեռագիրը սեպհականութիւն էր Հաւուց Թառի, մի յետին յիշատակարանի համաձայն, էջ 35. «Գիրքս Հայոց Թառոյ է, որ է աղօթատեղ սուրբ Լուսաւորչին, եւ հաստատարոց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի թարգմանութեան եւ առն իմաստութեամբ (!) սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրովբ եւ յետոյ Նորոգեաց սպարապետն Գորբ իշխանն»։ Ձեռագիրը կարող էր պահուած լինել Հաւուց Թառում գրչութեան ժամանակից, ինչպէս պահուել էր նոյն տեղում 1214 թուի աւետարանը մինչեւ 1618 թիւը։

Նոյնիմաստ եւ հաւանօրէն նոյն ձեռքով մի յիշատակարան կրկնւում է, էջ 212. «Աստանաւր յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս զմեղապարտ զնուաստ եւ զհողոյ հաւասար Նաթանայէլ եպիսկոպոս Հայոց Թառոյ, որ է սկիզբն սորայ ի սուրբ Լուսաւորչէն նոցա (!) եւ հիմնարկութեամբ հաստատել եւ հանդիսացեալ ի սուրբ թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ»։ Նաթանայէլ եպիսկոպոսն ապրում է ԺԳ. դարի երկրորդ կիսում կամ, որ աւելի հաւանական է, ԺԵ.ի վերջերում. որովհետեւ այդ ժամանակների համար միայն տեղեկութիւն չունինք վանքի մասին։ Ձեռագիրը ՌՃՁԸ (=1739) թուին սեպհականութիւն էր ոմն Կարապետ քահանայի։